

ունի 1831 թվականը: Հարուստությանն այդ թվականը սխալմամբ գրել է 1835: Նույն սխալը կատարել է նաև Լալայանը: Այդ թվականը բուն արձանագրության մեջ դրված է վերջում, Հարուստությանը սխալմամբ սկիզբն է գրել, նույնը կատարել է նաև Լալայանը:

Մեր ժողովածուի 163 արձանագրությունն ունի հայոց փոքր տոմարի ԾԵ (55) թվականը, որ մերով անում է $55 + 1084 = 1139$: Հարուստությանն այդ թվականի փոքր տոմարով լինելը չի հասկացել և ծանոթության մեջ գրել է, որ թերևս այդ թվականը պետք է կարդալ ԾԵ (505 + 551 = 1056): Նույն ենթադրությունն է արել նաև Լալայանը և նման մի ծանոթություն գրել իր կարդացածի տակին:

Վերևում մեր նշած Ի. Հարուստությանի բոլոր սխալները, որ մեջ բերինք ցույց տալու համար, թե նա օգտվել և տեղ-տեղ էլ արտագրել է Ջալալյանցից, Լալայանը մերենայաբար կրկնել է առանց բացատրության:

Այս պատճառով, Լալայանի հրատարակած արձանագրությունները որևէ գիտական արժեք չեն ներկայացնում:

1913 թվականին Պետերբուրգում լույս տեսավ Կարապետ Կոստանյանցի կազմած «Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց» գիրքը, որի մեջ նա ուղեցել է ի մի հավաքել մինչև այդ լույս տեսած հայերեն բոլոր վիմական արձանագրությունները և ժամանակագրական կարգով դասավորելուց հետո հրատարակել:

Կոստանյանցն ինքը ոչ մի արձանագրություն չի վերծանել քարերի վրայից, այդ ժողովածուն միայն տպագրածների հիման վրա է կազմել, ինչպես ինքն է ասում, իբրև ցուցակ, որով առաջնորդվելով պետք է հետազայում գիտականորեն հավաքեն և հրատարակեն արձանագրությունների լիակատար ժողովածուն (Corpus):

Սակայն Կարապետ Կոստանյանցի հիշյալ աշխատությունը լրիվ կերպով չի ընդգրկել մինչև այդ հրատարակված բոլոր արձանագրությունները: Նրա մեջ բացակայում են Սանահնի վանքի արդեն հրատարակված

43 արձանագրություն: Կոստանյանցը չի օգտագործել Քաջբերունուն և Ղրիմեցուն, թեև գրականության ցանկի մեջ երկուսի աշխատանքներն էլ նշված են:

Կոստանյանցը մեծ մասամբ օգտագործել է Ջալալյանցին, միայն մի արձանագրություն ունի, որ Ջալալյանցի մոտ չկա, դա մեր ժող. 111-րդն է, այն էլ վերցրել է Լալայանից¹:

Կոստանյանցի ժողովածուի թերությունների մասին նրա գրքի առաջաբանում մանրամասն գրել է ակադ. Ն. Մառը: Այդ խնդրի վրա մենք երկար կանգ չենք առնի, որովհետև Կոստանյանցի այս գործը տվյալ դեպքում մեզ համար էական նշանակություն չունի, որովհետև նա ինքնուրույն աշխատանք չէ, այլ արտագրություններ է մեծ մասամբ Ջալալյանցից, մասամբ նաև Լալայանից ու Հարուստությանից²: Սակայն, այստեղ պետք է նշենք, որ Կոստանյանցն իր օգտագործած այդ աղբյուրները ևս լրիվ չի ընդգրկել. Ջալալյանցից չի ընդօրինակել Սանահնին պատկանող 4 արձանագրություն (32, 54, 125, 144), Լալայանից՝ 8 (3, 67, 144, 160, 162, 163, 164, 187) և Հարուստությանից՝ 11 (3, 67, 95, 99, 102, 144, 145, 160, 162, 163, 164, 187):

Բացի այդ, Կոստանյանցը հաճախ արձանագրության բովանդակությունը կրճատել է, մանավանդ սկիզբն ու վերջավորությունը, որոնք նա կարևոր չի համարել:

Կոստանյանցն իր գրքի առաջաբանում նշում է, որ իր հրատարակած արձանագրությունները, որոնց հավաքողները համբավ են եղել, ճիշտ չեն վերծանված: Պետք է նշել, սակայն, որ ինքը ևս արձանագրությունների դասավորման և բովանդակության խնդիրներով քիչ է զբաղվել, խորամուխ չի եղել նրանց մեջ և այդ պատճառով էլ իր կողմից ևս մեծ թյուրիմացությունների տեղիք է տվել: Այսպես, օրինակ.

Արձանագրությունների թվականի սխալ ընթերցման հետևանքով Հաղբատի մի արձանագրություն՝ երկու անգամ է մեջ բերել: Նախ՝ Ռոստոմ-Բեկ Երզնկյանից վերցնելով

¹ Բացի այդ, մեր ժողովածուի 12 արձանագրությունն ընդօրինակել է Հարուստությանից, թեև այդ արձանագրությունն ունի Ջալալյանը և 7 արձանագրություն էլ (13, 103, 133, 165, 166, 167, 169) ընդօրինակել է Ջալալյանցից և Լալայանից:

² Մեր խոսքը վերաբերում է միայն Սանահնի արձանագրություններին: